ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

03.03.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/5 գնման պայմանագրի

ք. Երևան «19» 04 2022թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ. Անդրեասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 17.02.2022թ. N 200-Ն որոշումը և ՀՀ Վայոց Ձորի մարզի «Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, ՀՀ Գեղարքունիքի մարզի «Վ. Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Ակունք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճների վերակառուցման և ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գագարինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման համար Կողմերի միջև 03.03.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/5 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագիրը լրացնել նոր հավելված N 2-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 2 (երկու) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ՀՀ ք. Երևան, Թումանյան 32/1
կառավարական տուն 3	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 11500580197801
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 09802201
Հ/Հ 900011034775, 900011034676, 900011034528	
ՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան _____ (ստորագրություն)	Հ. Անդրեասյան _____ (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
03.03.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/5 գնման պայմանագրի
<<19>> 04 2022թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N 2
03.03.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/5 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	71351540-519	ՀՀ Վայոց Ձորի մարզի <<Շատինի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	-	-	-	2 519 700	2 519 700	2 519 700	2 652 200	2 652 200	2 652 200	2 652 200	2 652 200	2 652 200	2 652 200
	71351540-517	ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Վ. Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

	71351540-518	<<Ակունք գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	-	-	-	2 589 200	2 589 200	2 589 200	2 947 700	2 947 700	2 947 700	2 947 700	2 947 700	2 947 700	2 947 700
	71351540-516	ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Գագարինի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	-	-	-	2 942 600	2 942 600	2 942 600	2 949 500	2 949 500	2 949 500	2 949 500	2 949 500	2 949 500	2 949 500
Ընդամենը			-	-	-	8 051 500	8 051 500	8 051 500	8 549 400	8 549 400	8 549 400	8 549 400	8 549 400	8 549 400	8 549 400

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:>>*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011034775, 900011034676, 900011034528
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար

Գլխավոր քարտուղար

Ա. Մկրտչյան_____
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Թումանյան 32/1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500580197801
ՀՎՀՀ 09802201

Տնօրեն՝

Հ. Անդրեասյան_____
(ստորագրություն)

Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

№ 2550-02

«15» 04 2022

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/5 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/5 պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 2,190,000 (երկու միլիոն մեկ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/5 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ամբողջական կատարման օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը՝ բայց ոչ ուշ քան 05.12.2024թ.: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/5 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ — Ա. Սարգսյան

Ֆինանսական տնօրեն –
Գլխավոր հաշվապահ — Դ. Եղիգարյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010 Նալբանդյան 48: Հեռ.՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00: Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am, Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: РА, г. Ереван, 0010, Налбандян 48, Тел: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www@armbusinessbank.am
Address: Armenia, Yerevan, 0010, 48 Nalbandyan Street; Tel: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Website: www@armbusinessbank.am

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

№ 2549-02

«15» 04 2022

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ-ի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/5 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 1,460,000 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/5 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ամբողջական կատարման օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը՝ բայց ոչ ուշ քան 05.12.2024թ.: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/5 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ Ա. Սարգսյան

Ֆինանսական տնօրեն
Գլխավոր հաշվապահ Դ. Եղիգարյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010 Նալբանդյան 48: Հեռ.՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00: Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am, Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: РА, г. Ереван, 0010, Налбандян 48, Тел: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www@armbusinessbank.am
Address: Armenia, Yerevan, 0010, 48 Nalbandyan Street; Tel: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Website: www@armbusinessbank.am